ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԿՆԱԿԵՏ ԵՎ ԳԵՐԱԿԱ ՃՅՈՒՂ

Ռազմիկ Կամոյի Իսահակյան
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու

Զբոսաշրջության ոլորտին անդրադառնալը ինքնանպատակ չէ, և վերջին տարիներին արձանագրած դրական ցուցանիշները հիմք են տալիս պնդելու, որ այն դարձել է ՀՀ տնտեսության զարգացման շարժիչ ուժերից և տնտեսական աճին նպաստող ճյուղերից մեկը: Զբոսաշրջության ոլորտի նկարագրումը ՀՀ օրինակով հոդվածը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության, Զբոսաշրջային համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև Զբոսաշրջության մրցունակության զեկույցի փաստական տվյալների համադրումները և համապատասխան վերլուծությունները:

Այժմ անդրադառնանք Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտի առանձնահատկություններին այն դիտանկյունից, որտեղից դիտարկվող ոլորտն իր դրսևորումն է ստացել՝ որպես տնտեսության զարգացման գերակա ճյուղ և մեկնակետ:

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ զբոսաշրջությունը սահմանվում է՝ որպես ճանաչողական, հանգստի, առողջական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը՝ մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն[1]:

Ներկայումս միջազգային պրակտիկայում լայն տարածում է ստացել զբոսաշրջության դասական սահմանումը, ըստ որի՝ զբոսաշրջությունը ազատ ժամանակ իրենց բնակության երկրից կամ բնակավայրից մարդկանց ժամանակավոր տեղաշարժն է՝ ճանաչողական, հանգստի, առողջական, հյուրընկալության, գործնական–մասնագիտական և այլ նպատակներով, բացառությամբ՝ վարձատրվող աշխատանքային գործունեության[2]:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացմանը նպաստում է մեր երկրի կառավարության կողմից տարվող բաց երկնքի քաղաքականությունը: Նախկինի համեմատ ավիաընկերությունների թիվն

---

[1] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 17.03.2013:

[2] **Яковлев Г. А.** Экономика и статистика туризма: учебное пособие. 2-е изд., перераб. и доп., М.: Издательство РДЛ, 2004, 376 с.

աճել և հասել է 28-ի, որոնք մեր երկրից իրականացնում է կանոնավոր ավիափոխադրումներ: Օտարերկրացիների համար, նաև Հայաստանի Հանրապետությունը էապես ավելի հասանելի է դարձել սահմանի անցման գործընթացների դյուրացման արդյունքում: Ավելի քան 40-ով ավելացել է այն երկրների թիվը, որոնց քաղաքացիներն ազատված են մուտքի արտոնագիր ստանալու պահանջից: Հայաստանի Հանրապետությունն աշխարհին հայտնի է նաև՝ որպես անվտանգ զբոսաշրջային երկիր, ինչի մասին փաստում են մեր երկիր այցելած օտարերկրացիները, ինչպես նաև հեղինակավոր պարբերականները, հասարակական կարծիքի ինստիտուտ Gallup-ը, որը մեր երկիրը ներառել է ամենաապահով երկրների շարքում: Նշենք նաև, որ Հայաստանի Հանրապետություն ժամանող զբոսաշրջիկների զգալի մասը հայկական արմատներ ունեն: Զբոսաշրջիկների ամենամեծ հոսքը դեպի մեր երկիր լինում է Ռուսաստանի Դաշնությունից, Իրանից, ԱՄՆ-ից: Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ մեկ զբոսաշրջիկը Հայաստանի Հանրապետությունում անց է կացնում միջինը 17 օր՝ ծախսելով շուրջ 770 ԱՄՆ դոլար (370 հազար դրամ): Զբոսաշրջության տեսանկյունից՝ Հայաստանի Հանրապետություն այցելելու առավել գրավիչ նախադրյալներն են՝ մշակութային ժառանգությունը, ծառայությունների որակը, հյուրընկալությունը, սնունդը և բնությունը:

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում տարվող պետական քաղաքականության հիմնական և կարևոր նպատակներից մեկն այն պետք է լինի, որ զբոսաշրջիկների կենտրոնացումը ընդգրկվի և սահմանափակվի ոչ միայն մայրաքաղաք Երևանով, այլև՝ տարածքային համաչափ զարգացման հենքի վրա ձևավորված մարզերով ևս, որը զբոսաշրջիկներին այլընտրանքային հնարավորությունների հիմքեր կարող է ստեղծել: Ոլորտի արագ աճը, ինչպես նաև երկրում այս տարիների ընթացքում ձևավորված բարենպաստ ներդրումային միջավայրը խթանել են զբոսաշրջային ենթակառուցվածքների շեշտակի զարգացմանը: Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է առավել քան 540 հյուրանոց, ինչն առավել քան 2 անգամ գերազանցում է 2007 թվականի ցուցանիշին: Հանրապետության մարզերում արդեն գործում է ավելի քան 30 հոսթել, գյուղական բնակավայրերում ավելի քան 250 գյուղական տուն, ինչպես նաև՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների նոր տեսակ՝ օրավարձով բնակարաններ, որոնց քանակն անցում է 4000-ը: Հայաստանի Հանրապետությունը գրավիչ է դարձել նաև համաշխարհային հեղինակավոր հյուրանոցային ցանցերի համար, մասնավորապես՝ Radisson, Marriott, IBIS, Hilton և այլն:

Նշենք, որ 2015թ. դրությամբ զբոսաշրջության ուղղակի բաժնեմասը ՀՆԱ-ում կազմել է 3.6%՝ 163.1 միլիարդ դրամ: Այս հաշվարկում ներառված են այնպիսի ենթակառուցվածքների գործունեությունը, ինչպիսիք են՝

հյուրանոցներ, զբոսաշրջային գործակալություններ, ավիատրանսպորտ ու տրանսպորտային այլ կազմակերպություններ, սննդի և զբոսաշրջության արդյունաբերություն և այլն: Կանխատեսվում է, որ այս ցուցանիշը մինչ 2023թ. պետք է գրանցի տարեկան 2.1% աճ: Զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետությունում տնտեսության զարգացմանը նպաստող ճյուղերից մեկն է: Մեր երկիր այցելող զբոսաշրջիկների թիվը 2013թ-ից հատել է 1 միլիոնի սահմանագիծը: 2016թ. ընթացքում, չնայած ներքին ու արտաքին լուրջ խնդիրներին, Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային հոսքերը ոչ միայն չնվազեցին, այլև նախորդ տարվա համեմատ ավելացան 6%-ով՝ հասնելով 1.26 միլիոնի, ավելին աճել է նաև ներքին զբոսաշրջությունը՝ հասնելով 1 000 000 մարդու[1]:

Բացի ՀՀ Ազգային վիճակագրական տվյալներին տիրապետելուց, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ երկրների տնտեսական ցուցանիշները, մրցակցային առավելություններն ու թերությունները: Այդ իսկ պատճառով հարկ է համեմատականներ անցկացնել նաև հավասարազոր տնտեսություններ ունեցող երկրների զարգացման առանձնահատկությունների հետ, ավելին ձգտել և հասնել զարգացած երկրների փորձին և ներուժին: Ստորև ներկայացնենք մեր երկրի զբաղեցրած դիրքը 140 երկրների շարքում՝ համաձայն 2018թ. «Զբոսաշրջության մրցունակության զեկույց»-ի:

Արդեն յոթերորդ անգամն է, ինչ Հայաստանի Հանրապետությունը ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող զբոսաշրջության մրցունակության զեկույցում: Մեր երկիրը, ըստ համանուն զեկույցի, զբոսաշրջության մրցունակությամբ 70-րդն է 140 երկրների շարքում: Ըստ Զբոսաշրջության մրցունակության համաթվի՝ այն իր դիրքը բարելավել է 3 տեղով՝ 2017թ. հետ համեմատ: Զբոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկրների ցանկն այս տարի գլխավորում են ԱՄՆ-ն, Սինգապուրը և Գերմանիան: Զբոսաշրջության մրցունակության զեկույցում երկրների դասակարգման տեսանկյունից հիմք են հանդիսացել բազմաթիվ գործոններ, մեծ ուշադրություն է դարձվել զբոսաշրջային ենթակառուցվածքների որակին, ավիատոմսերի բարձր գներին և օդանավակայանի վճարներին, որակյալ աշխատուժի պակասին, զբոսաշրջիկների ներգրավմանն ուղղված մարքեթինգի և բրենդինգի ցածր արդյունավետությանը, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի ու պահպանման ցածր մակարդակին, որոնք համարվել են հիմնախնդիրներ[2]:

---

[1] Տուրիզմի դերը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում, ampop.am, 2017թ.:

[2] The Travel and Tourism Competitiveness Report 2017, World Economic Forum, Geneva, 2017, pp. 33, 84-85.

Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կանխատեսումների՝ 2020թ. համաշխարհային միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կկազմի 1.6 միլիարդ մարդ, զբոսաշրջային ծախսերի գումարը կհասնի մինչև 2 տրիլիոն ԱՄՆ դոլարի, իսկ ոլորտում աշխատատեղերի թիվը կհասնի 262 միլիոնի[1]: Աշխարհի բազմաթիվ երկրներ զբոսաշրջության ոլորտում իրենց պետական քաղաքականության նպատակներից են սահմանել համաշխարհային շուկայից ավելի մեծ թվով ժամանումների և ավելի շատ եկամուտների ներգրավումը: Ավելին, ըստ ԶՀԿ փորձագետների կանխատեսումների՝ զբոսաշրջային այցելությունները 2030թ. կկազմեն 1.8 միլիարդ մարդ[2]:

Հայաստանի Հանրապետությունում, հաշվի առնելով առկա ռեսուրսային ներուժը, զարգացման մեծ հեռանկարներ ունեն զբոսաշրջության հետևյալ հիմնական ձևերը[3].

- **Կրոնական զբոսաշրջություն:** Հայաստանն առաջինն է ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն 301թ.: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եկեղեցին կառուցել են Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Գ-ն, այն վայրում, որտեղ և, ըստ Գրիգոր Լուսավորչի երազի, իջել է «Միածինը»՝ Աստծո որդին: Մայր տաճարը հայության համար սրբազան ուխտատեղի է համարվում: Էջմիածնի մյուս եկեղեցիները՝ Խոր Վիրապը, Գեղարդը, Հաղարծինը, Գոշավանքը, Հաղպատն ու Սանահինը, Տաթևը, Նորավանքը, ևս համարվում են յուրահատուկ սրբազան վայրեր, որոնք կարող են զբոսաշրջիկներ գրավել աշխարհի տարբեր անկյուններից:
- **Պատմամշակութային զբոսաշրջություն:** ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում են ներառված Մայր Տաճարը և Էջմիածնի եկեղեցիները, Հաղպատի և Սանահինի վանական համալիրները, Գեղարդի վանական համալիրը և Ազատի վերին հովիտը, Զվարթնոցի հնագիտական տաճարը: Թեկնածու ցուցակում են նաև Դվինի ավերակները, Երերույքի տաճարի ավերակները, Տաթևի վանական համալիրը, Որոտանի հովիտը, Նորավանքի վանական համալիրը և Ամաղու հովիտը[4]:

---

[1] Tourism 2020 Vision: Global Forecasts and Profiles of Market Segments, World Tourism Organization, Volume 7, pp. 9-10.

[2] Tourism Towards 2010/Global overview published by the World Tourism Organization, Madrid, 2011, pp. 10-15.

[3] **Թովմասյան Գ.** Զբոսաշրջության առկա վիճակը և հիմնական տեսակների զարգացման հնարավորությունները ՀՀ–ում, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր, միջազգային 5-րդ գիտաժողով, ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում, Երևան, 2017թ., էջեր 49-51:

[4] Properties inscribed the World Heritage list, http://whc.Unesco.Org/en/statesparties/am.

- **Քաղաքային զբոսաշրջության** համար լավ պայմաններ ունի ինչպես մայրաքաղաք Երևանը, այնպես էլ երկրի այլ քաղաքներ՝ Գյումրին, Վանաձորը, Իջևանը, Դիլիջանը, Ծաղկաձորը և այլն: Վարդագույն Երևանն էլ, լինելով աշխարհի հնագույն քաղաքներից մեկը (2801 տարեկան), հանդիսանում է թանգարան բաց երկնքի տակ՝ իր հին ու նոր կառույցներով, հարուստ պատմությամբ ու մշակույթով:
- **էքստրիմալ զբոսաշրջություն:** Իջևանից մի փոքր հեռավորության վրա՝ Ենոքավանում, գործում է Yell Extreme Park-ը, որը հայտնի է իր Zip line-երով, որոնցից ամենաերկարը 750 մետր է, իսկ թռիչքն անցնում է 200-300 մետր բարձրության վրա: Նախագծային աշխատանքներ են սկսվել նաև աշխարհի ամենաերկար Zip line-ը կառուցելու ուղղությամբ, որի երկարությունը կկազմի շուրջ երեք կիլոմետր: Պետական աջակցությամբ ձևավորվում, զարգանում և միջազգային շուկայում աստիճանաբար ավելի ճանաչելի են դառնում Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ավանդական փառատոնները, որոնք ներառում են շուրջ 30 թեմա: Ավելին, National Geographic ամսագրի կողմից ներկայացված վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ներգրավել է հինգ առաջատար երկրների ցանկում՝ որպես խոհարարական տեսանկյունից մատչելի և հետաքրքիր երկիր: Տարեցտարի ոչ միայն մեր երկրում, այլև միջազգային շուկայում ավելի ճանաչված և սպասված են դառնում Հնաբերդի տոլմայի, Արենիի գինու, Ախթալայի խորոված՝ի, Խաչիկի գաթայի, Գորիսի թթի և ավանդական այլ փառատոններն ու միջոցառումները: Փառատոնները կազմակերպվում են նաև Արցախում:

Նշված զբոսաշրջային ուղղությունները հիմք են տալիս փաստելու, որ մեր երկիրը ներկայանում է զբոսաշրջիկներին ոչ միայն լոկալ հանրապետության հայտնի հատվածներով, այլև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով, որը ևս մեկ խթան է տվյալ ոլորտի տարածական զարգացվածությունը հասցնելու ավելի բարձր մակարդակների:

Զբոսաշրջիկներին գրավելու նպատակով 2019թ. մայրաքաղաք Երևանում բացվել է Dine Sky ռեստորանը, որը գործում է բաց երկնքում: Dine Sky-ը ռեստորան է, որտեղ կարող են այցելել սուր զգացողությունների սիրահար այցելուները՝ ՀՀ քաղաքացիները և մեր երկիր ժամանած հյուրերն ու զբոսաշրջիկները: Ճախրող ռեստորանը, կամ Dine Sky-ը, նման է մետաղական տաղավարի, որին վերև է բարձրացնում ամբարձիչ կռունկը: Այն ունի 8 մետր երկարություն և 3 մետր լայնություն, նախատեսված է 22 անձի համար: Ռեստորանը պտտվում է 360 աստիճանով, և նման բարձրությունից հյուրերը կարող են հիանալ Երևանյան գեղեցիկ

տեսարաններով: 180 աստիճանով պտտվում են նաև աթոռները, նույնիսկ կարելի է թիկնակը հետ գցել և պառկել[1]: Այսպիսի նախաձեռնությունները լավ հենք են գրավելու զբոսաշրջիկների լայն մասաների: Կարևոր է նաև, որ Dine Sky ռեստորանի Երևանյան ձմեռային տարբերակը առաջինն է լինելու աշխարհում, որը նախատեսված է լինելու 16 անձի համար: Հավելենք նաև, որ Dine Sky ռեստորանի բացմանը նպաստել է վերջին տարիների մեր երկրի հեղինակության բարձրացումը, որը և զբոսաշրջային հոսքերի ավելացման հիմք է հանդիսացել:

Այժմ ներկայացնենք մարքեթինգային գործիքակազմի 1 օրինակ, որը զարգացման կամուրջ է հանդիսանում և զբոսաշրջության ոլորտի, և բիզնեսների ընդլայնման, և մեր երկրի ճանաչելիության բարձրացման տեսանկյունից: Այս ծառայությունը ներդրված է մայրաքաղաք Երևանում, որից օգտվելու առավելությունները և հիմնական գործառույթները ներկայացնենք հերթականությամբ.

«Երևան քարտը» Երևանի պաշտոնական զբոսաշրջային քարտն է, որը յուրօրինակ միջոց է քաղաքում առաջարկվող գրեթե բոլոր հաստատություններից և ծառայություններից արտոնյալ պայմաններով օգտվելու համար: Քարտը հնարավորություն է ընձեռում անվճար մուտք գործել թանգարաններ, ժամանցի վայրեր, մասնակցել էքսկուրսիաների, ինչպես նաև անվճար օգտվել քաղաքային տրանսպորտից (տաքսի, մետրո): Քարտով 1 տարվա ընթացքում կարող եք ստանալ նաև մեծ զեղչեր քաղաքի լավագույն սննդի օբեկտներից, խանութներից, հյուրանոցներից և մյուս գործընկեր կազմակերպություններից, որոնց թիվը գերազանցում է 150-ը: Միանվագ վճարելով փաթեթի համար, որում ներառված են՝ մուտքի միասնական քարտ, անվճար բովանդակալից ուղեցույց (135 էջ), քարտեզ, բջջային հավելված, բջջային քարտ (ծրագրի օպերատորի հետ անվճար խոսելու և ինտերնետից օգտվելու հնարավորությամբ) ու անվճար 24-ժամյա տեղեկատվական ծառայություն, զբոսաշրջիկը կարող է վայելել ամբողջական և հագեցած արդյունավետ շրջագայություն՝ տնտեսելով զգալի գումար: Ներկայումս «Երևան քարտ» համակարգն իր հաճախորդներին առաջարկում է չորս տեսակի քարտ.

- 1 օր – 24 ժամ,
- 2 օր – 48 ժամ,
- 3 օր – 72 ժամ,
- Անժամկետ քարտ (**Unlimited time**):

«Երևան քարտը» նախատեսված է միայն անհատական օգտագործման համար: Այն **«Գլոբալ կոլիբրի»** ՍՊԸ-ի սեփականությունն է: Այն ակտիվացնելուց հետո չի կարող վերադարձվել, փոխանցվել այլ անձի կամ փոխանակվել: Ամբողջական փաթեթն իր մեջ ներառում է.

[1] Armtimes.com, 19 հունիսի, 2019թ.:

- Երևան Քարտ (NFC տեխնոլոգիայով),
- Ուղեցույց (135 էջ),
- Երևանի քարտեզ,
- Բջջային քարտ ինտերնետով,
- Տրանսֆերի կտրոն,
- Էքսկուրսիայի մասնակցության կտրոն,
- Բեյջ:

Փաթեթում ներառված է նաև **Երևան քաղաքի քարտեզը**, որտեղ Դուք կգտնեք առաջարկվող օբյեկտների ու ծառայությունների տեղայնությունը՝ առավել հեշտ կողմնորոշվելու համար: «Երևան քարտ» փաթեթում առկա **բջջային քարտով** Դուք կարող եք անվճար խոսել մեր 24-ժամյա տեղեկատվական ծառայության օպերատորի հետ և ձեր ընտրած «Երևան քարտի» վրա նշված օրերին ունենալ օրական 200mb անվճար ինտերնետ: Անժամկետ քարտի համար (Unlimited time) նախատեսված է 3 օր անվճար ինտերնետ: **«Երևան Քարտի» տրանսֆերի կտրոնի** օգնությամբ Դուք հնարավորություն ունեք անվճար տեղափոխվել ավտոմեքենայով (Պաշտոնական Aeroport taxi) «Զվարթնոց» օդանավակայանից մինչև Երևան քաղաքի ցանկացած վայր կամ անվճար տեղափոխվել Երևան քաղաքի ցանկացած վայրից «Զվարթնոց» օդանավակայան: Քարտը կարելի է գնել նաև առցանց տարբերակով «Երևան քարտի» պաշտոնական կայք էջից: (https:/yerevancard.com/am)[1]

Հարկ է նշել նաև, որ մեր երկրում զբոսաշրջության ոլորտն արդեն մի քանի տարի է, ինչ ունի պետական լուրջ աջակցություն, համարվում է տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը, և համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշման[2]՝ ՀՀ կառավարությունը տնտեսական զարգացման երեք առաջնահերթությունների շարքում այս ոլորտին առանձնահատուկ տեղ է հատկացրել: Ծրագրում նշվում է, որ վերջին ժամանակների զբոսաշրջային հոսքերի ավելացումը մեծ խթան կհանդիսանան փոքր և միջին բիզնեսի զարգացման համար: Անդրադարձ է կատարվում կառավարության անելիքների վերաբերյալ, մասնավորապես՝ զբոսաշրջիկների համար ապահովել անհրաժեշտ ենթակառուցվածքներ, սպասարկման անհրաժեշտ մակարդակներ, որոնք հարիր կլինեն Հայաստանի Հանրապետության իմիջին, որը վերջին ժամանակներում ձևավորվել է միջազգային հանրության շրջանակներում: Կարևորվել է նաև զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով

[1] https:/yerevancard.com/am.

[2] ՀՀ կառավարության ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշում, էջեր 27-28, ՀՀ կառավարության ծրագիր, 2019թ. N 65-Ա որոշում, Երևան, 2019թ., էջ 48:

հանրային տրանսպորտի ուղեցույցները, համապատասխան փողոցային և զբոսաշրջային վայրերը կահավորել առավել տարածված օտար լեզուներով նշաններով: Զուգահեռաբար նախատեսվում է առավել զարգացնել զբոսաշրջային այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ էկոտուրիզմը, գաստրոտուրիզմը, էքստրիմ տուրիզմը, էթնո տուրիզմը, որոնք հնարավորություն կտան համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետությունը ավելի թիրախավորված դիրքավորել և համապատասխան հետաքրքրություններ ունեցող զբոսաշրջիկների համար մեր երկիրն առավել գրավիչ դարձնել: Հայաստանի Հանրապետության կառավարությունը զբոսաշրջության զարգացման տեսակետից կարևոր է համարում վիզային ռեժիմների ազատականացումը, նաև օդային տրանսպորտի գների անկմանն ուղղված ջանքերի գործադրումը, որին էլ ուղղված են ավիավառելիքի շուկայի հակամենաշնորհային միջոցառումները: Տնտեսական քաղաքականության հիմնական առաջնահերթ ուղղությունները հաշվի առնելով՝ կարող ենք եզրակացնել, որ ներկայիս կառավարությունը իր ուժերի ներածին չափով կփորձի ուշադրություն դարձնել և աջակցել դեռ նոր զարգացում ապրող և թափ ստացող այս առանձնահատուկ ոլորտին և ողջ գործիքակազմը հետևողականորեն կօգտագործի վերջին տարիների դրական զարգացումները պահպանելու և այն շարունակական դարձնելու նպատակով:

2017-2018թթ. հունվար-մարտ ամիսների փաստական թվերով արտահայտված ՀՀ-ում զբոսաշրջային հոսքերը ավելացել են՝ 298.533 հազարից հասնելով 346.458 հազարի, տոկոսային արտահայտությամբ աճը կազմել է 16.1%: Ընդ որում՝ 50 և ավելի տոկոսով աճել են հետևյալ երկրներից ժամանող զբոսաշրջիկների թիվը՝ 2018թ-ին՝ 2017թ. համեմատ, այդ երկրներն են՝ Ռուսաստանի Դաշնությունը, Նիդերլանդները, Գերմանիան, Վրաստանը, Ամերիկայի Միացիալ Նահանգները[1]:

Այսպիսով, փաստական թվերը և վերլուծությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ զբոսաշրջության ոլորտը ՀՀ տնտեսության արագ զարգացող և դրա զարգացմանն օժանդակող կարևորագույն ուղղություններից մեկն է: Այն երկար տարիներ հանդիսացել է մեր երկրի տնտեսության զարգացման առաջնահերթություններից և անընդհատ իր տեղը գտել և գտնում է տնտեսության զարգացման գերակայություններում: Զբոսաշրջության ոլորտի տեսլականը ներառված է նաև 2018–2019թթ. ՀՀ կառավարության ծրագրերում, այն հանդես է գալիս որպես տնտեսության զարգացման երեք առաջնահերթություններից մեկը և շատ կարևոր է, որ այն ունի պետական ուշադրության և աջակցության լայն հնարավորություն:

[1] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017-2018թթ. հունվար-ապրիլին, armstat.am:

Տվյալ ոլորտը ոչ միայն հանդիսանում է ՀՀ տնտեսության գերակա ճյուղերից մեկը, այլև կարող է դառնալ մեր երկրի տնտեսության զարգացման շարժիչ ուժը և մեկնակետը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԿՆԱԿԵՏ ԵՎ ԳԵՐԱԿԱ ՃՅՈՒՂ

Ռազմիկ Կամոյի Իսահակյան
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Հոդվածում զբոսաշրջության ոլորտը դիտարկվել է՝ որպես ՀՀ տնտեսության զարգացման մեկնակետ և գերակա ճյուղ: Տեսական հատվածի նկարագրումը զուգորդված է նաև վիճակագրական տվյալներով, որոնց համադրումը և համապատասխան վերլուծությունները պատկերավոր են դարձնում ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման ժամանակակից առանձնահատկությունները: Զբոսաշրջությունը ՀՀ տնտեսության շարժիչ ուժերից մեկն է և շատ կարևոր է փաստել այն հանգամանքը, որ այն մեր երկրում ունի ոչ միայն զարգացման առաջանցիկ տեմպեր, այլև այս ոլորտին ընձեռված է նաև պետական լուրջ աջակցության հնարավորություն:

Բանալի բառեր՝ մեկնակետ, պետական քաղաքականություն, մրցունակություն, զբոսաշրջություն, տնտեսություն, զբոսաշրջային հոսքեր, մարդկային կապիտալ:

ТУРИЗМ КАК ОТПРАВНАЯ ТОЧКА И ПРИОРИТЕТ ДЛЯ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ АРМЕНИИ

Размик Камоевич Исаакян
Младший научный сотрудник Института экономики
им. М. Котаняна НАН РА, кандидат экономических наук

Аннотация

В статье индустрия туризма рассматривается как основа и приоритет для развития экономики Армении. Описание теоретической части статьи сопровождается статданными, сравнение и анализ которых делают очевидными наличие в развитии сферы туризма Армении современных особенностей. Туризм является одним из движущих сил развития экономики РА, и очень важно отметить, что в нашей стране он имеет не только первичные

темпы развития, но и то, что этой отрасли предоставляется возможность большой государственной поддержки.

Ключевые слова: отправная точка, государственная политика, конкурентоспособность, туризм, экономика, потоки туризма, человеческий капитал.

TOURISM AS A STARTING POINT AND PRIORITY FOR ARMENIA'S ECONOMY

Razmik Kamo Isahakyan
Junior Research Associate of M. Kotanyan Institute of Economics of NAS RA,
Candidate of Economic Sciences

Abstract

In the article, the tourism industry has been viewed as the starting point and priority for the development of Armenias economy. The description of the theoretical part is accompanied by statistical data and the appropriate analysis, which makes the Armenian tourism development explanations more illustrated. Tourism is one of the developed parts of Armenian economy and it is very important to emphasize the fact, that it has not only progressive development part in our country, but also provides a serious opportunity for state support.

Keywords: starting point, state policy, competitiveness, tourism, economy, tourism flows, human capital.